

ունդաց . լի էր անձն իմ բովանդակ 'ի սիւքս անուշարարս : Բացաւ բերան իմ 'ի կլանել զօդն կենդանարար , բացաւ միւսանգամ 'ի տուր և առս չնչոյ . և անդէն իմացայ եթէ էր 'ի ներքս յիս զօրութիւն հոտոտելեաց նուրբ և գոգ տրիկ քան զառաջինն . . . Ճաշակեցի :

Ո՛վ քմապարար ճաշակացն , ով նորաքանչ զգայութեանն . ցայն վայր հաճոյք ևեթ էին վայելքս , իսկ ճաշակ ազդեաց ինձ հեշտալիս : Սայելք ներքին ծնան յիս միտս՝ սեպհաններոյ յիս ինքն զարարածս . թուէր ինձ եթէ յեութիւնս իմ փոխարկեցաւ պտղոյն գոյութիւն , և թէ մարթ էր ինձ կերպարանափոխ առնել զէակս համօրէն :

Ինչնապանծ իշխանականն խորհրդովք, և յորդորեալ ՚ի հեշտալի բզգայութեանցն, միանգամ և միւսանգամ ձգեցի զձեռն իմ ՚ի պտուղս, զի ոչ պարտասէր բազուկք իմ արբանեկել հաճոյիցս. այլ տակաւ թմբիր ախորժական ընդ բովանդակ զգայութիւնս իմ ծաւալէր, և ծանրաբեռնեալ մասանց մարմնոյս նհանջեաց զեռանդն հոգւոյս :

Համարէի եթէ աղօտացեալ խորհրդոյ մտացս՝ յանգործութեան կալեալ զիս ունէին, և բ[թացեալ զգայութեանց ստուերածս զարարածովք արկանէին և անտիպս և անկերպարանս առաջի իմ նկարէին զնոսա : Գայնմ ժամանակի փակեցան աչք իմանզօրք 'ի տեսանել, և ջլատեալ զօրութիւն մկանանցս՝ ոչ ևս կարէին 'ի վեր ունել զգլուխն իմ, վասն որոյ և սա խոնարհեալ յեցաւ 'ի դալարիս, և անդէն ամենայն ինչ եղծաւ և անհետ ծածկեցաւ : Եւ աղարեցաւ միջնաշաւիղ խորհրդոցս, և կորեաւ յինէն գիտակցութիւն էութեանս : Եւ անորաւ [թուն էր քունս, այլ չգիտեմ [թէ և յերկար, տակաւին չունելով ծանօթս զԺամանակէ, վասն որոյ և 'ի չափել զնոյն անբաւական : Օար[թեայ և [թուէր ինձ՝ ահա միւսանգամ ծնանիցիմ, և համարէի եթէ դադարեալ իցէ առ վայր մի իմն գոյութիւն : Եւ քու[թիւնս իմ այս գոր յանձին զգալի, ազդեասց

յիս երկիւղ, և ծանոյց ինձ եթէ չե՞  
ինձ մարթ կեալ յաւէժաբար :

Ի՛յլ ահա նորօրինակ տագնապ , զի ոչ գիտէի եթէ կորուսի արդեօք 'ի քուն հանգստեան մասն ինչ յեութէս . Ի համար զգգայարանս իմ կոչեցի , և կամէի տեսանել և ճանաչել զանձն իմ : Յայսմ վայրի հասեալ արփենւոյն 'ի ծայր ասպարիզին շիջոյց զձահ իւր լուսաբորբոք . չմարթացայ անդէն 'ի միտ առնուլ՝ եթէ ահա կորուսանեմ զտեսութիւն . զի գիտակ անխուսափելի էութեանս՝ ոչ երկնչէի կորուսանել ըզգոյութիւն իմ , և խաւար որ ծածկէրն զիս՝ ընդ վայր 'ի յուշ իմ ածէր զերևոյթս առաջին քնոյս , :

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ**

## ՃԱՐՏԱՐՈՒԹՅՈՒՆ

**Երրորդայի ձարտարոքեան և վաճառականո-  
րեան վրայ գիտելիք :**

ԼԵՒՈՂԱՅՆ բոլորը մէկէն առնելով  
կրնայ ըսուիլ թէ ճարտարութեան աշ-  
խարհ մըն է, 'ի բաց առեալ քանի մը  
մանր կողմերը . որովհետեւ կը տեսնենք  
որ աշխարհք մը կամ երկիր մը չկայ որ  
իրեն յատուկ մէկ ձեռագործ մը կամ  
արուեստ մը չունենայ և քիչ շատ նոյն  
բանին մէջ յաջողութիւն չցուցնէ .  
Ասոյք գիտութիւններն ալ օր օրուան  
վրայ արուեստներու յարմարցընելով  
մանաւանդ աս վերջի տարիներս , ճար-  
տարութեան շատ մեծ ձեռնտութիւն  
եղաւ . շարժաբանութիւնը կամ մեքե-  
նական գիտութիւնը մարդուս տկար ու-  
ժը յանհունս զօրացուց՝ ջրաշարժ օդա-  
շարժ և մանաւանդ շոգեշարժ մեքե-  
նայից ձեռքով՝ որոնց չնչաւոր արարածոց  
ուժը անկարելի էր որ հասներ . բնալու-  
ծութիւնը շատ դիւրին կերպեր ցցուց  
մարմիններ լուծելու ու բազազրելու  
դիւրին ու անվնաս կերպով , որուն մէկ  
հատիկ օրինակ կրնանք սեպել հին կամ  
մեղիկով ու նոր կամ կայվանեան ոսկե-

զօծումը, արծաթազօծումը և այլն . բնաբանութիւնն ալ մարմնոց օրէնքներէն շատը ճարտարութեան հաղորդեց, որով առջի Կտուած գիւտերն աւելի աւազահով ու անմնաս գործածելի եղան : Լ. յսպիսի գիւտերով ձեռագործներն այնչափ աժընցան, որ Լ. Երուսալմի իր պիւտոյքը առատապէս հոգալէն ետեւ՝ աշխարհքիս մէկալ մասերուն ալ ամէն պէտք եղածը և նոյն իսկ պերճութեան աւելորդ զարդարանքները կը հասցընէ :  
( ) որ օրինակ ինկիլիզի ճարտարութիւնը՝ իրեն մեծամեծ գործարաններովը, մեքենական արուեստից ընդարձակելովը ու շոգէշարժ մեքենայից ձեռքովը՝ բոլոր աշխարհ կը տարածուի, որով և աշխարհիս ամենէն առջի ազգը կը սեպուի :

Հիմա թէ որ Լ. Երուսալմի քաղաքական բաժանման համեմատութեամբ նկատեմք ճարտարութեան ջանքը, առջինը կը տեսնենք Լ. նոյնի միացեալ թագաւորութիւնը, յետոյ Ֆրանսայի հասարակապետութիւնը, Գերմանական դաշնակցութիւնը, Բրիտանիոյ միապետութիւնը, Լ. Եստրիոյ կայսերութիւնը և այլն : Իսկ եթէ առանց քաղաքական բաժանման նկատենք իւրաքանչիւր աշխարհք իրենց ճարտարութեանը կողմանէ, աս կարգը կը գտնենք . նախ Ինկիլթէնայ և Սկոտիայի հարաւային կողմը, Ֆրանսայի հիւսիսային ու արեւեան կողմերը, բոլոր Պելճիոյ ու Սաքսոնիայի թագաւորութիւնները, Բրիտանիոյ միապետութեան մէջ Ռէնանեան գաւառները ու բոլոր Շ. լեզիան, Սորաւիայի, Պոնտիայի ու Լ. Եստրիոյ արշիդքսութեան մեծ մասը, նոյն կայսրութեան մէջ Ս. Երուսալմի ու Խալապիւսի քանի մը նահանգները, ( ) ու իցյեւրայի մէջ Յուրիկ, Պապիւլէա, Նիւնեւրա, Սանկալոյ, Լեօշաթէլ, արտաքին Լիւնդէլ ու Լիւդովիա նահանգները : Լ. սոնցմէ ետեւ պէտք է սեպել իտալական տէրութեանց մէջ Նեոպոլի, Սիււրինի, Սամպիւրի գաւառները, Ֆլորէնցէի նահանգը, Պոմպիայի գաւառը, Լափոլի շրջակայքը . Սալոնիայի մէջ

Վաղալոնիան, Ս. ալէնցան, Լալիցիան ու Պիսքուլեան . Ռուսի կայսրութեան մէջ Ս. Սուքայի, Ս. Լատիմիրի, Վոսթրոմա ու Փեթրպուրկի կառավարութիւնները :

( ) որ աւելի մանր իջնենք՝ կը տեսնենք որ աս ան նիւթերն ալ հոս տեղի և հոն տեղի կապուած են, և մասնաւորապէս նոյն ձեռագործին ետեւէ կ'իյնան . զոր օրինակ բամբակը կը բանին Ս. Լէնսթէր (Ինկիլթէնա), Ս. Իւհաւզէն (Ֆրանսա), Լ. Վալէրֆէլտ (Բրիտանիա), Շ. Էմիլի (Սաքսոնիա), Վ. Լուսթա, Լ. Վանուվոյ (Ռուսիա) : Լ. Խրկաթը զէնքի և մանր գործեաց համար կը բանուի Պիրմինկէմ (Ինկիլթէնա), Լ. Իէթ (Պելճիա), Ս. Լէնթ-Լ. Իէն (Ֆրանսա), Շ. Թէյէր (Լ. Եստրիա), Փաուլովոյ (Ռուսիա), Ս. Ետաքսը Լ. Իոն (Ֆրանսա), Ս. Բիթթիլտս (Ինկիլթէնա), Վ. Բիթթէլտ (Բրիտանիա) : Լ. ալ զիտելու է որ մեծամեծ տէրութեանց մայրաքաղաքները, և բազմամարդ քաղաքները ուր որ հարստութիւն և ճոխութիւն կայ՝ շատ տեսակ ճարտարութեանց ալ կեդրոն սեպուած են . զոր օրինակ գրեթէ ճարտարութիւն չկայ որ Վաղղիոյ մայրաքաղքին մէջ ծաղկած չըլլայ, անոր համար առուտուրի մէջ ալ ընդհանուր առումով Փարիզ ապրանք կ'ըսուին . նոյն բանը կրնայ իմացուիլ նաև Լ. Լոնտրայի համար ալ, և քանի մը զարտուղութեամբ նաև Ս. Իէննայի, Պելզինի, Փեթրպուրկի, Պրուսիոյ, Լ. Կափոլի, Սիււրինի և ուրիշ երկրի քաղաքներուն վրայ ալ :

Լ. Երուսալմի ճարտարութեան վրայ մարդ որոշ գաղափար առած չըլլար, թէ որ որսորդութենէ, ձկնորսութենէ, երկրագործութենէ, անտառներ կտրելէն և հանքեր գործելէն առաջ եկած հարստութեանց ալ ուշ չընէ . զոր օրինակ Լ. Երուսալմի Ռուսաստանին ընդարձակ երկիրները՝ որ երկայն ու խիստ ձմեռներուն համար երկրագործութեան չեն յարմարիր կենդանեաց որսորդութեան մեծ վաստակ կը բերեն, այնպէս որ Ռուսաստանի ամենէն մեծ եկամուտ

ներէն մէկը՝ չըսենք առջինը, իր մուշտակներն են : Եւ մանապէս ձկնորսութիւնը երբոր ընդարձակ ըլլայ՝ եւրոպական վաճառքի գլխաւոր ճիւղ մը կը սեպուի . այսպէս է բնիկայի, Ֆրանսացի, պալէստինացի որսորդութիւնները, որոնց համար հազարաւոր նաւեր կը գործածեն ինկիլիզները, սքանտինավիացիք, հոլանտացիք ու գաղղիացիք . նմանապէս Բոնի, սարքէէ և բուստի որսը՝ որ գաղղիացւոց, սպանիացւոց ու իտալացւոց ձեռքն է : — Երկրագործութիւնն ալ ճարտարութեան կարգ կ'անցնի, երբոր երկիրը լաւ մշակուի ու կատարելագործուի, ինչպէս է Ենկիլթէնուայի քանի մը կոմսուկէ մէջ, Պեճիս, Ֆրանսայի քանի մը նահանգները, Լոմպարտիա ու Վենետիկ, Իտալիոյ քանի մը ուրիշ կողմերը, և Վերմանական դաշնակցութեան քանի մը նահանգները : Բաւական ըլլայ ըսելը որ Ֆրանսայի գինիներէն ու օղիներէն եկած ստակը, քան այլ ամենայն ձեռագործներէ եկածէն աւելի է . նմանապէս Ենկիլթէնուայի պիրրայէն և օղիէն եկածը՝ իրեն ամենէն բանուկ ձեռագործներէն մէկուն՝ այսինքն բամբակէն եկածին հաւասար է . Իտալիայի մինակ ան մասն ալ որ Լաստրիոյ ձեռքն է տարին 80,000,000 ֆրանք կը հանէ, ան ալ միայն մանած և ոչ թէ հինած մետաքսէն : Իսկ հանքերը տէրութեանց ամենէն մեծ գանձերն են, որոնք որ անգործ ժողովրդեան մը ձեռք բոլորովին գետնի տակ թաղուած կը մնան :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս Ը . Հողային նիւթերու վրայ .

Յախճապակի շինելուն կաւը խեցեղէն անօթներուն կաւերէն տարբեր է, ու մասնաւոր անունով չինացի բառով կ'ըսուի քաւէն, որ է գայլախաղի, պաղլէլահողի ու առատ փոթասի բաղադրու-

թիւն մը : Յախճապակ անօթները թրծուելու ատեն կէս ապականիւթ բան մը կ'ըլլան, այնպէս որ ուրիշ ապիկի կարօտ չեն . ասով պնակի նիւթէն կորոշուին, վասն զի աս ետքինս քիչ շատ միշտ ծակոտէն կ'ըլլայ : Յախճապակը թէպէտ և ապիկի կարօտ չէ, բայց աւելի ողորկ ու փայլուն ըլլալու համար ձեռք մը կը տրուի . աս ապիկին պարզ որձաքար ըսուած գայլախաղի տեսակ քարով կը շինուի, որն որ սաստիկ տաքութեամբ միայն կը հալի : Սովորաբար յախճապակին ոսկիով ու փրթի նով կը զարդարեն, և ապակիներուն պէս տեսակ տեսակ թթուիկներով կը գունաւորեն :

Սերը թթուածնի ու զուտ կիր ըսուած մետաղին բաղադրութիւնն է, գայլախաղին ու պաղլէլահողին պէս անհամ չըլլալէն զատ, նաև սաստիկ խայթող ու այրող է . անոր համար կալաքար թթուիկներուն, այսինքն սոտային ու փոթասին կարգը դրուած է : Ետեւոք կրաքար կ'ըսէին ան ամէն քարերուն՝ որ կրանալով (այրելով) չմարած կրի յատկութիւններ կ'ունենային . ինչպէս նաև մետաղաց թթուիկներուն ալ մետաղային կիր կ'ըսէին :

Սիրը բնութեան մէջ զուտ չգտուիր, հապտ ուրիշ թթուներու հետ խառնուած, որ իր այրող զօրութիւնը կը չէզոքացընեն, ինչպէս ինքն ալ անոնց համն ու սպառիչ զօրութիւնը կորսունցընել կու տայ . և անոնց հետ միատեղ աղեր կը ձևանայ, որոնց գլխաւորներն են կրի ածխուտ և կրի ծծմբուտ . որոնց վրայ համառօտ մը խօսինք :

Սրի ածխապ . ասիկայ ածխային թթութիւն ու զուտ կրի թթուիկին բաղադրութիւնն է, որ բնութեան մէջ շատ կը գտուի, որոնցմով լեռներու գօտիներ ձևացած են . չէնքի գործածուած շատ քարերը, վիմագրութեան քարը, կաւիճը, ոստրէի և ուրիշ ժամուկներու սլատեանները, մարմարիոնները, կրային ալապաստը, ժայրերու մէջ ձևացած վերնաքիւլերն ու ներքնաքիւլերը բոլորն ալ կրի ածխուտ են :